

ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԵՐԻՑՈՒԿԻ ԱՆՅՈՂ ԱՃԵՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԳԱՍ Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ

Բնության մեջ դեղաբույսերի բնական պաշարներն անսպառ չեն, ավելին, ենթակա են անընդհատ նվազման, ուստի անհրաժեշտ է ոչ միայն կազմակերպել արժեքավոր դեղաբույսերի արտադրություն, այլև մշակության ոլորտ ընդգրկել հազվագյուտ և ոչնչացման սպառնալիքի տակ հայտնված նորանոր բուսատեսակներ:

Նշված խնդրի լուծման համար իր առանձնահատուկ դերն ունի բույսերի անհող մշակույթը, որն առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում դեկավարվող պայմաններում, բույսի աճման և զարգացման օպտիմալ պայմանների ապահովման շնորհիվ, բարձրորակ և էկոլոգիապես մաքուր դեղահումքի ստացման տեսանկյունից:

Հաշվի առնելով այս ամենը, մեր կողմից առաջին անգամ փորձ է կատարվել Հայաստան ներմուծել և հետազոտել արժեքավոր դեղաբույս դեղատնային երիցուկի հիդրոպոնիկ մշակման հնարավորությունը և արդյունավետությունը:

Դեղատնային երիցուկը (*Matricaria recutita* L.) աստղածաղկավորների (*Astera-ceae*) ընտանիքին պատկանող միամյա խոտաբույս է: Բուծման նպատակով օգտագործվում են ծաղիկները, որոնք պարունակում են թունդ կապույտ երանգով և հաճելի բուրմունքով եթերայուղ 0,5 % սահմաններում, տերպեններ, սեսկվիտերպեններ, ֆլավոնոիդներ, կումարիններ, ապիին և այլ նյութեր, որոնցով և պայմանավորված են բույսի հակաբորբոքային, հանգստացնող, ռեզներացնող (վերականգնող) և հակաանեմիկ հատկությունները: Օգտագործվում է բրոնխիալ ասթմայի, կոկորդաբորբի, ռևմատիզմի, լուծի, բերանի խոռոչի բորբոքումների դեպքում, իսկ կոսմետիկայում՝ մազերը ներկելու համար: Պաշտոնապես ճանաչված է ֆարմակոպեայում:

Գիտափորձերի արդյունքները ցույց են տվել, որ դեղատնային երիցուկի նորմալ աճի ու զարգացման, ինչպես նաև դեղահումքի բարձր արդյունավետության համար լավագույն պայմաններ են ապահովել գլաբար+իր.խարամ լցանյութի և Դավթյանի նորմալ սննդալուծույթի կես խտության տարբերակները: Բույսերն առատ ճյուղավորվել են (14 ճյուղ), ձևավորվել է հաստ ցողուն (10մմ), իսկ չոր դեղահումքից (25,5 գ/բույս) եթերայուղի ելը կազմել է 209մգ/բույս: Հողային մշակույթի պայմաններում աճեցված երիցուկի չոր դեղահումքը կազմել է 5,4գ/բույս՝ 39մգ/բույս եթերայուղի ելով:

Դեղաքիմիական հետազոտությունները ցույց են տվել, որ լցանյութի ընտրությունը էականորեն չի ազդել ֆլավոնոիդների պարունակության և կազմի վրա (կոսմոսին՝ 0,15-0,16%, ցինարոզիդ՝ 0,12-0,13%), մինչդեռ սննդալուծույթի խտությունը զգալիորեն ներգործել է վերջիններիս վրա: Ամենաբարձր քանակություն դիտվել է (0,19 և 0,16%, համապատասխանաբար) Դավթյանի նորմալ սննդալուծույթում աճեցված բույսերում: Հողային մշակույթում այն եղել է 0,18 և 0,16%, համապատասխանաբար:

Այսպիսով, Արարատյան դաշտի պայմաններում բացօթյա հիդրոպոնիկայում կատարված հետազոտությունների արդյունքները հաստատում են դեղատնային երիցուկի անհող աճեցման հնարավորությունը, բարձր արդյունավետությունը և հեռանկարայնությունը:

S.K.Mairapetyan, J.S.Alexanyan, A.H.Tadevosyan, B.T.Stepanyan, A.V.Gasparyan,
H.M.Galstyan

THE FEASIBILITY OF THE SOILLESS CULTIVATION OF CAMOMILLE

Summary

The feasibility and efficiency of camomille (*Matricaria recutita* L) soilless cultivation in the Ararat valley have been studied. It was shown that gravel+volcanic slag and 0.5 concentration of the Davtyan nutrient solution ensures the maximal dry medicinal raw matter harvest (25.5 g/plant) and the highest yield of essential oil (209mg/plant). In soil these indices were 5.4 g/plant and 39 mg/plant, respectively.